

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ**

Ստուգաթերթ N 47

**Ռադիոհաճախականության տիրույթի էլեկտրամագնիսական ճառագայթումների (ՌՀ ԷՄՃ) աղբյուրներ
հանդիսացող սարքերի արտադրություն և շահագործում
Հաղորդող ռադիոտեխնիկական օբյեկտների (ՀՌՏՕ) տեղակայում
(ՏԳՏԴ ծածկագիր՝ 26.3 և 61.)**

_____	_____	_____
(տեսչության տարածքային մարմնի անվանումը)	(գտնվելու վայրը)	(հեռախոսահամարը)
_____	_____	_____
(ստուգող անձի պաշտոնը)	(ազգանունը, անունը, հայրանունը)	
_____	_____	_____
(ստուգող անձի պաշտոնը)	(ազգանունը, անունը, հայրանունը)	
_____	_____	_____
(ստուգող անձի պաշտոնը)	(ազգանունը, անունը, հայրանունը)	

Ստուգման սկիզբը (ամսաթիվը) _____ ավարտը՝ _____

_____	_____
(տնտեսավարող սուբյեկտի անվանումը)	(ՀՎՀՀ-ն)
_____	_____
(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը)	(հեռախոսահամարը)
_____	_____
(տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը)	(հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագիր _____ ում կողմից _____ երբ է տրված _____

Ստուգման նպատակը /Ընդգրկված հարցերի համարներ _____

N	Հարց	այո	ոչ	չ/պ	կշիռ	հղում նորմատիվ ակտին	Ստուգման մեթոդ	Մեկնաբանություն
1	Ռադիոհաճախականության տիրույթի էլեկտրամագնիսական ճառագայթումների /այսուհետ՝ ՌՀ ԷՄՃ/ աղբյուրների նորմատիվատեխնիկական փաստաթղթերը համապատասխանում են սանիտարական կանոնների պահանջներին: Նշում՝ 1				1	Հղում 1, Հավելված 1, կետ 1.3	փաստաթղթային	
2.	ՌՀ ԷՄՃ աղբյուրներ հանդիսացող սարքերի արտադրությունը և շահագործումը իրականացվում է միայն ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության դրական եզրակացության առկայության պայմաններում:				3	Հղում 1, Հավելված 1, կետ 3.2	փաստաթղթային	
3.	Արտադրողը ապահովում՝					Հղում 1, Հավելված 1, կետ 3.4	փաստաթղթային	
3.1	ՌՀ ԷՄՃ աղբյուրների արտադրանքի արտադրական վերահսկողությունը, փորձարկումը,				3			
3.2	էլեկտրամագնիսական ճառագայթման ինտենսիվության և այլ հիգիենիկ ցուցանիշների և բնութագրերի ուսումնասիրության կազմակերպումը				3			
3.3	անվտանգության անհրաժեշտ միջոցների մշակումը				3			
4	ՌՀ ԷՄՃ աղբյուրների արտադրանքի նորմատիվային փաստաթղթերը պարունակում են հետևյալ տեղեկատվությունը.					Հղում 1, Հավելված 1, կետ 3.5.	փաստաթղթային	
4.1	հստակ սահմանված են արտադրանքի կիրառման բնագավառը և պայմանները:				2			
4.2	հիգիենիկ ցուցանիշները և արտադրանքի բնութագրերը (մարդու օրգանիզմի վրա վնասակար և վտանգավոր գործոնների տեսակները և թույլատրելի մակարդակները, որոնց աղբյուրն է հանդիսանում արտադրանքի նմուշը).				2			

4.3	հիգիենիկ ցուցանիշների և արտադրանքի բնութագրերի հսկողության կանոնները և մեթոդները, որոնք կապահովեն վնասակար գործոնների փաստացի մակարդակները, թույլատրելի մակարդակներին համապատասխան:				2			
5.	ՌՀ ԷՄՃ աղբյուրների շահագործման փաստաթղթերում ներառված են՝					Հղում 1, Հավելված 1, կետ 3.5.	փաստաթղթային	
5.1	արտադրանքի կիրառման բնագավառը և պայմանները,				2			
5.2	հիգիենիկ ցուցանիշները և հակահամաճարակային տեսչության եզրակացության համարը, դրա տրման ամսաթիվը և գործողության ժամկետը:				2			
5.3	արտադրանքի բնութագրերը (մարդու օրգանիզմի վրա փաստացի ազդեցության մակարդակները),				2			
5.4	մարդու համար դրա կիրառման անվտանգությունն ապահովող միջոցառումները, առաջին օգնությունը սուր հիվանդությունների ժամանակ (անհրաժեշտության դեպքում),				3			
6.	Անհրաժեշտության դեպքում, արտադրանքի դիմային մակերեսին կատարված է համապատասխան նախազգուշական նշագրում:				1	Հղում 1, Հավելված 1, կետ 3.6.	Տեսողական	
7	Շրջակա տարածություններ էլեկտրամագնիսական ճառագայթներ հեռարձակող ռադիոլոկացիոն, ռադիոհաղորդող, հեռուստատեսային, ռադիոռելեային, արբանյակային, կապի երկրային կայանների (ՀՌՏԿ հաղորդող ռադիոտեխնիկական կայաններ), /բացառությամբ շարժականներից/, շրջակա տարածություններ էլեկտրամագնիսական ճառագայթներ հեռարձակող այլ օբյեկտների տեղակայումը և շահագործումը իրականացվում է միայն պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության մարմինների դրական եզրակացության առկայության պայմաններում: Նշում՝ 2				3	Հղում 1, Հավելված 1, կետ 5.1., 5.2	Տեսողական փաստաթղթային	
8	Աշխատողներին ՌՀ ԷՄՃ ազդեցությունից պաշտպանելու համար իրականացվում են՝					Հղում 1, Հավելված 1, կետ 6.1, 6.8	տեսողական	
8.1	Կազմակերպական միջոցառումներ՝ սարքավորումների աշխատանքի ռացիոնալ ռեժիմի ընտրությունը, ՌՀ ԷՄՃ ազդեցության գոտում անձնակազմի գտնվելու տեղի և ժամանակի սահմանափակումը (պաշտպանություն հեռավորությամբ և ժամանակով) և այլն:				3			

8.2	Ինժեներատեխնիկական միջոցառումները ներառում են՝ սարքավորումների ռացիոնալ տեղակայումը, անձնակազմի աշխատատեղերը թափանցող էլեկտրամագնիսական էներգիայի սահմանափակման միջոցների օգտագործումը (հզորությունների կլանիչներ, էկրանավորում, գեներատորների անհրաժեշտ նվազագույն հզորությամբ օգտագործումը), ՌՀ ԷՄՃ-ի բարձր մակարդակով գոտիների նշագրում, սահմանազատում:				3			
8.3	անհատական պաշտպանական միջոցների օգտագործում՝ ակնոցների, խալաթների, սաղավարտների, վահանակների օգտագործում և այլն: Նշում՝ 3				2			
9	ՌՀ ԷՄՃ աղբյուրները ապահովված են գործարանային էկրաններով:				1	Հղում 1, Հավելված 1, կետ 6.2	տեսողական	
10.	Անհրաժեշտության դեպքում, եթե փորձարկումներն իրականացվում են կազմակերպության տարածքում կամ արտադրամասերում, ձեռնարկվում են արտադրամասի (տարածքի) սահմաններում և աշխատատեղերում ՌՀ ԷՄՃ սահմանային թույլատրելի մակարդակների գերազանցումը բացառող միջոցառումներ:				2	Հղում 1, Հավելված 1, կետ 6.3	տեսողական	
11.	Ալեհավաքի վրա ճառագայթող սարքերի աշխատանքի ընթացքում նախատեսված են ձայնային և լուսային ազդանշաններ:				2	Հղում 1, Հավելված 1, կետ 6.3	տեսողական	
12.	ՌՀ ԷՄՃ աղբյուրների կամ աշխատատեղերի էկրանավորումը կատարված է մետաղյա թիթեղներով, ցանցերով, մանրալարեր ունեցող կտորից կամ այլ նյութից պատրաստված անդրադարձնող կամ կլանիչ ստացիոնար կամ շարժական էկրանների միջոցով:				2	Հղում 1, Հավելված 1, կետ 6.4	տեսողական	
13.	Կլանիչ էկրաններում օգտագործվում են համապատասխան երկարության ալիքի ճառագայթման կլանումը ապահովող հատուկ նյութեր: Կախված ճառագայթման հզորությունից, աղբյուրի և աշխատանքային տեղերի փոխադարձ տեղակայումից էկրանների կառուցվածքային լուծումը կարող է լինել տարբեր (փակ խցիկ, գրահ, միջնորմ, պատյան և այլն):				2	Հղում 1, Հավելված 1, կետ 6.4	տեսողական	
14.	Փակ խցիկի տեսքով էկրանավորման դեպքում, ալիքատարների, համակենտրոն հաղորդալարերի, ջրի, օդի խողովակների մուտքերը, ինչպես նաև ղեկավարման վահանակների բռնակների և կարգավորող տարրերի ելքերը չեն խախտել խցիկի էկրանավորող հատկությունները:				2	Հղում 1, Հավելված 1, կետ 6.5.	տեսողական	

15.	Դիտապատուհանների, սարքերի պանելների էկրանավորումը կատարվում է ռադիոպաշտպանիչ ապակիներով: Օդափոխության փեղկերով էլեկտրամագնիսական էներգիայի ներթափանցումը փոքրացնելու համար, վերջիններս էկրանավորվում են մետաղական ցանցերով, կամ իրականացվում են անդրսահմանային ալիքատարների տեսքով:				2	Հղում 1, Հավելված 1, կետ 6.6.	տեսողական	
16.	Ալեհավաքների կողային բաղադրիչներից էներգիայի արտահոսքի նվազեցումը իրականացվում է «դրոսելային ֆլանցերի» կիրառմամբ, կողային բաղադրիչների ամրացմամբ, մետաղալարերից (ֆոսֆորական բրոնզ, պղինձ, ալյումինակապար և այլն) և կլանիչ նյութերից պատրաստված ներդիրների միջոցով իրականացվում է լրացուցիչ էկրանապատում:				1	Հղում 1, Հավելված 1, կետ 6.7.	տեսողական	
17.	Էկրանապատված շենքերում (խցիկներում) աշխատելու դեպքում, վերջիններիս հատակը, առաստաղը և պատերը ներսից պատված են ռադիոկլանիչ նյութերով: Ուղղորդված ճառագայթման դեպքում կլանիչ ծածկը օգտագործում են միայն պատերի, հատակի, առաստաղի համապատասխան տեղամասերում:				2	Հղում 1, Հավելված 1, կետ 6.9.	տեսողական	
18.	ՀՌՏԿ-ի տարածքում ճառայողական սենքերը տեղավորում են առավելապես «ռադիոսովերի» գոտում դռները և պատուհանները ՌՀ ԷՄՃ աղբյուրներին հակառակ կողմորոշումով:				1	Հղում 1, Հավելված 1, կետ 6.10.	տեսողական	
19.	ՌՏԿ-ի տարածքում անձնակազմի շարժման ուղերթերը սահմանված են այնպես, որ ՌՀ ԷՄՃ սահմանային թույլատրելի մակարդակներից բարձր լինելու դեպքում բացառվի մարդկանց ճառագայթման հնարավորությունը:				2	Հղում 1, Հավելված 1, կետ 6.11.	տեսողական	
20.	ՌՀ ԷՄՃ սահմանային թույլատրելի մակարդակից բարձր լինելու գոտիները նշված են հատուկ նախագգուշացնող նշաններով և գրառումներով:				1	Հղում 1, Հավելված 1, կետ 6.11.	տեսողական	

21.	ՌՀ ԷՄՃ ազդեցության հետ կապված առողջական վիճակի խանգարումների կանխարգելման, վաղաժամ ախտորոշման և բուժման նպատակով, աշխատողները ենթարկվել են պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննությունների՝ ՀՀ կառավարության 15.06.04 N 1089-Ն «Արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող բնակչության առանձին խմբերի առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության ծավալի, բժշկական հակացուցումների ցանկերը և աշխատանքի պայմանների հիգիենիկ բնութագրման կարգը հաստատելու մասին» որոշմամբ սահմանված կարգով: Նշում՝ 4				3	Հղում 1, Հավելված 1, կետ 7.1, 7.2	փաստաթղթային տեսողական	
22.	ՌՀ ԷՄՃ աղբյուրների սեփականատերերի/ շահագործողների կողմից ապահովված են հսկողական չափումներ: Նշում՝ 5					Հղում 1, Հավելված 1.2, կետ 1, 2, 3		
22.1	ընթացիկ հսկողության կարգով ոչ պակաս տարին մեկ անգամ:				3		փաստաթղթային	
22.2	ՌՀ ԷՄՃ աղբյուրների աշխատանքի ռեժիմում և պայմաններում ճառագայթման մակարդակի վրա ազդող փոփոխությունների դեպքում (գեներատորային և ճառագայթող տարրերի փոխում, տեխնոլոգիական գործընթացի, էկրանավորման և պաշտպանիչ միջոցների փոփոխություններից հզորության մեծացում, տարրերի տեղակայման փոփոխություններ և այլն), ՌՀ ԷՄՃ աղբյուրի վերանորոգումից հետո:				3		փաստաթղթային	
23.	ՌՀ ԷՄՃ ինտենսիվության չափումները կատարում են սահմանված կարգով չափագիտական ատեստավորում անցած և ստուգման վերաբերյալ գործող վկայական ունեցող սարքերով:				2	Հղում 1, Հավելված 1.2, կետ 1.1	փաստաթղթային	

Հղում 1. ՀՀ առողջապահության նախարարի 2006 թ. օգոստոսի 16-ին N 933-Ն հրամանով հաստատված «Ռադիոհաճախականության տիրույթի էլեկտրամագնիսական ճառագայթումների (ՌՀ ԷՄՃ) ճառագայթումներ» սանիտարական կանոններ և նորմեր N 2.1.8-010-06

Նշում 1, կետ՝1- N 2.1.8-010-06 սանիտարական կանոններ և նորմերը սահմանում են 30 կՀց-300 ԳՀց էլեկտրամագնիսական ճառագայթումների (ՌՀ ԷՄՃ) մարդկանց վրա ազդեցության սահմանային թույլատրելի մակարդակները: Սանիտարական նորմերին և կանոններին համապատասխան, հսկողության ենթակա չեն.

Արտադրական գործընթացում օգտագործվող ՌՀ ԷՄՃ աղբյուրները, եթե դրանք չեն աշխատում տարածության մեջ ճառագայթման համար նախատեսված ալեհավաքի բաց ուղեծրի կամ այլ էլեմենտի վրա և դրանց առավելագույն բարձր հաճախականության հզորությունը համաձայն անձնագրային տվյալների, չի գերազանցում՝

5 Վտ-ը՝ 30 կՀց-3 ՄՀց հաճախականության տիրույթում,

2 Վտ-ը՝ 3-30 ՄՀց հաճախականության տիրույթում,

0.2 Վտ-ը՝ 30 ՄՀց-300 ԳՀց հաճախականության տիրույթում:

Կենցաղային սարքավորումները և սարքերը, անհատական կրվող ռադիոհաղորդիչ միջոցները, մինչև 18 տարեկան անձանց և հղի կանանց աշխատատեղերում օգտագործվող, ՌՀ ԷՄՃ աղբյուրները, եթե դրանց անվանական բարձր հաճախականության հզորությունը չի գերազանցում՝

1 Վտ-ը՝ 30 կՀց-3 ՄՀց հաճախականության տիրույթում,

0.5 Վտ-ը՝ 3-30 ՄՀց հաճախականության տիրույթում,

0.5 Վտ-ը՝ 30 ՄՀց-300 ԳՀց հաճախականության տիրույթում:

Նշում 2, կետ՝ 7- հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության մարմինների հետ համաձայնեցման ենթակա չէ շենքից դուրս (այդ թվում՝ տանիքի վրա) այնպիսի ՀՌՏԿ-ների տեղակայումը, որոնց տեղադրված ալեհավաքի ուղղորդված գործողության գործակիցը 5-ից ոչ ավելի է և առավելագույն հզորությունը չի գերազանցում ներքոհիշյալ մակարդակները՝

40 Վտ՝ 30 կՀց-3 ՄՀց հաճախականության տիրույթում,

20 Վտ՝ 3-30 ՄՀց հաճախականության տիրույթում,

2 Վտ՝ 30 ՄՀց-300 ԳՀց հաճախականության տիրույթում:

5.3. ՀՌՏԿ-ները՝ հաղորդող ռադիոտեխնիկական կայանները պետք է տեղակայվեն այնպես, որպեսզի բաց տարածքներում և շենքերում ՌՀ ԷՄՃ ինտենսիվությունը չգերազանցի աղյուսակ 1-ում բերված սահմանային թույլատրելի մակարդակները: Առաջարկվում է հաղորդիչ հանդիսացող ռադիոտեխնիկական օբյեկտները տեղակայել շրջապատի նկատմամբ առավելագույն բարձրադիր տեղանքներում:

Նշում 3, կետ՝ 8.3- Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհատական պաշտպանական միջոցները պետք է որոշվեն հաշվի առնելով հաճախականությունների աշխատանքային տիրույթը, իրականացվող աշխատանքների բնույթը և տևողությունը, ինչպես նաև պաշտպանության անհրաժեշտ արդյունավետությունը:

Անհատական պաշտպանական միջոցներն անհրաժեշտ է օգտագործել այն դեպքերում, երբ ընդհանուր պաշտպանական միջոցներով ՌՀ ԷՄՃ-ի մակարդակի նվազեցումը տեխնիկապես հնարավոր չէ: Եթե պաշտպանական հագուստը պատրաստված է այնպիսի նյութից, որն իր մեջ պարունակում է մետաղալար, ապա այն կարող է օգտագործվել այնպիսի պայմաններում, երբ բացառված է աշխատողի հպումը սարքի բաց էլեկտրական հոսանք պարունակող մասերի հետ:

Նշում 4, կետ՝ 21- Աշխատողները չեն անցնում բժշկական զննություն, եթե ՌՀ ԷՄՃ մակարդակը աշխատատեղերում չի գերազանցում սահմանային թույլատրելի մակարդակները: ՌՀ ԷՄՃ ազդեցությամբ պայմանավորված առողջական վիճակի կլինիկական խանգարումների նախնական դրսևորումներով (ասթենիկ, ասթենո-վեգետատիվ, հիպոթալամոսային համախտանիշ) բոլոր անձինք, ինչպես նաև ընդհանուր հիվանդություններով (կենտրոնական նյարդային համակարգի օրգանական հիվանդություններ, հիպերտոնիկ հիվանդություն, էնդոկրին համակարգի հիվանդություններ, արյան հիվանդություններ) հիվանդ անձինք, որոնց մոտ վերջիններիս ընթացքը կարող է խորանալ աշխատանքի միջավայրի անբարենպաստ գործոնների ազդեցությամբ, պետք է վերցվեն հսկողության տակ՝ աշխատանքի պայմանների

առողջացմանը և աշխատողների առողջապահական վիճակի վերականգնմանն ուղղված համապատասխան հիգիենիկ և բուժական միջոցառումների իրականացմամբ:

7.4. Աշխատողներին ժամանակավոր կամ մշտական այլ աշխատանքի տեղափոխումը կատարվում է այն դեպքերում, երբ մասնագիտական օրհանրությունը բնութագրվում է արտահայտված ձևով կամ վատթարացնող ընթացքով կամ ընդհանուր հիվանդությունը խորանում է ՌՀ ԷՄՃ ազդեցության արդյունքում: Այլ աշխատանքի են տեղափոխվում նաև հղի և կերակրող կանայք:

7.5. 18 տարին չլրացած անձինք և հղի կանայք ՌՀ ԷՄՃ աղբյուրներ հանդիսացող սարքերի մոտ աշխատելու թույլտվություն են ստանում այն դեպքում, երբ վերջիններիս ճառագայթման ինտենսիվությունը աշխատատեղերում չի գերազանցում աղյուսակ 3.4. և 3.5-ում նշված սահմանային թույլատրելի մակարդակները:

Էներգետիկ էքսպոզիցիայի (ԷԷ) սահմանային թույլատրելի մակարդակներ

Հաճախականության դիսպոզիցիաներ	Սահմանային թույլատրելի էներգետիկ էքսպոզիցիան (ԷԷ)		
	ըստ էլեկտրական բաղադրիչների (E) (Վ/մ) ² .ժ	ըստ մագնիսական բաղադրիչների (H) (Ա/մ) ² .ժ	ըստ էներգիայի հոսքի խտության (էՀԽ) (մկ.Վր/սմ ²).ժ
30 կՀգ-3 ՄՀգ	20000.0	200.0	-
3-30 ՄՀգ	7000.0	մշակված չէ	
30-50 ՄՀգ	800.0	0.72	
50-300 ՄՀգ	800.0	մշակված չէ	
0 ՄՀգ-300 ԳՀգ	-	-	200.0

Էլեկտրական և մագնիսական բաղադրիչների լարվածության սահմանային թույլատրելի մակարդակները կախված ազդեցության տևողությունից, հաճախականությունների 30 կՀգ-300 ՄՀգ դիսպոզիցիանում

Ազդեցության տևողություն T, ժամ	Եսթմ Վ/մ			Խսթմ Ա/մ	
	0.03-3 ՄՀգ	3-30 ՄՀգ	30-300 ՄՀգ	0.03-3 ՄՀգ	30-50 ՄՀգ
8.0 և ավելի	50	30	10	5.0	0.30
7.5	52	31	10	5.0	0.31
7.0	53	32	11	5.3	0.32
6.5	55	33	11	5.5	0.33

6.0	58	34	12	5.8	0.34
5.5	60	36	12	6.0	0.36
5.0	63	37	13	6,3	0,38
4.5	67	39	13	6.7	0.40
4,0	71	42	14	7.1	0.42
3.5	76	45	15	7.6	0.45
3,0	82	48	16	8.2	0.49
2.5	89	52	18	8.9	0.54
2,0	100	59	20	10.0	0.60
1.5	115	68	23	11.5	0.69
1,0	141	84	28	14.2	0.85
0.5	200	118	40	20.0	1.20
0.25	283	168	57	28.3	1.71.
0,125	400	236	80	40.0	2.40
0.08 և պակաս	500	296	80	50.0	3.00

ՌՀ ԷՄՃ սահմանային թույլատրելի մակարդակները բնակչության 18 տարին չըրացած անձանց և հղի կանանց համար

Սենքի կամ տարածքի նշանակությունը	Հաճախականության տիրույթ				
	30 կՀգ-300 կՀգ	0.3-3 ՄՀգ	3-30 ՄՀգ	30-300 ՄՀգ	300 ՄՀգ-30 ԳՀգ
	ՌՀ ԷՄՃ սահմանային թույլատրելի մակարդակ				
	Վ/մ	Վ/մ	Վ/մ	Վ/մ	ՄկՎտ/սմ ²
Կառուցապատված բնակելի տարածքներ և զանգվածային հանգստի վայրեր Բնակելի, հասարակական և արտադրական շենքերում (արտաքին ՌՀ ԷՄՃ, ներառյալ՝ երկրորդային ճառագայթումը) 18 տ. չըրացած անձանց և հղի կանանց աշխատատեղեր	25.0	15.0	10.0	3.0 բացառությամբ շրջանային կամ սկաներացման ռեժիմով աշխատող հեռու-տացուցային և ռադիոլուկացիոն կայանների	10.0-100.0 շրջանային դիտարկման կամ սկաներացման ռեժիմով աշխատող այլեհավաքներից ճառագայթման դեպքում, կետ 3.5-ում նշված պայմանների կատարմամբ

Հեռուստատեսային կայաններում ստեղծվող ՌՀ ԷՄՃ թույլատրելի սահմանային մակարդակներ

Հ/հ	Հաճախականություն, ՄՀց	ՍԹՄ, Վ/մ
1	48.4	5.0
2	88.4	4.0
3	192.0	3.0
4	300.0	2.5

Նշում՝ 5, կետ՝ 22-

ՌՀ ԷՄՃ ինտենսիվության հսկողությանը ներկայացվող պահանջներ

1. Չափման միջոցներին ներկայացվող պահանջներ

1.2. 30 կՀց-30 մՀց հաճախականության տիրույթի չափման համար պետք է օգտագործել էլեկտրամագնիսական դաշտերի լարվածությունների միջին քառակուսային մակարդակների չափումների համար նախատեսված, 30% թույլատրելի հարաբերական սխալով սարքեր:

0,3-300 ԳՀց հաճախականության տիրույթի դեպքում չափումների համար պետք է օգտագործել էներգիայի հոսքի խտության միջին մակարդակների չափման համար նախատեսված, 30% թույլատրելի սխալով սարքեր: Չափումների իրականացման համար նախապատվությունը պետք է տալ իզոտոպային տվիչներով սարքերին:

2. Հսկողության կետերի ընտրություն

2.1. Արտադրական պայմաններում չափումները պետք է կատարել անձնակազմի մշտական աշխատատեղերում: Մշտական աշխատատեղերի բացակայության դեպքում, ընտրվում է մի քանի կետեր աշխատանքային գոտու շրջանակներում, որտեղ աշխատողը ներկա է լինում աշխատաժամերի 50%-ից ոչ պակաս ժամանակահատվածում:

Բացի դրանից իրականացվում են չափումներ աշխատանքի գործընթացում անձնակազմի ներկա գտնվելու հնարավոր տեղերում:

2.2. Ճառագայթման հեռավոր գոտում աշխատելու համար նախատեսված ուղղորդված ազդեցությամբ ակտիվացված ռոնտգեն սարքերով էներգիայի հոսքի խտության չափումների ժամանակ սարքերի ակտիվացվածները չպետք է մոտենան էներգիայի ելքի տեղին պակաս հեռավորությամբ, քան, $r_{min} = d^2 / \Gamma$ որտեղ d -ն ընդունող ակտիվացված երկրաչափական չափսն է, " Γ "՝ ճառագայթման ակտիվ երկարությունը:

2.3. NFM-1 կամ նմանատիպ սարքերով ՌՀ ԷՄՃ էլեկտրական բաղադրիչների չափումների դեպքում, անհրաժեշտ է դիպոլային ակտիվացված սարքի և մետաղական մակերեսների (առարկաների) միջև պահպանել 50 մ հեռավորություն: Փոքր հեռավորությունների դեպքում, կտրուկ աճում են չափումների սխալները:

2.4. Բնակելի և հասարակական շենքերում (ներքին ճառագայթում, ներառյալ՝ երկրորդականը) ՌՀ ԷՄՃ ինտենսիվության չափումները իրականացվում են սենքի կենտրոնում, պատուհանների, ջեռուցման մարտկոցների և այլ հաղորդակցման ուղիների մոտ, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, այլ կետերում:

2.5. Արտաքին ճառագայթման չափումը, օդի լավորակման բացակայության դեպքում, կատարվում է օդանցքի, վերնափեղկի բաց կամ պատուհանի փեղկի կիսաբաց վիճակում:

2.6. Բաց տարածքներում չափումները կատարվում են գետնի մակերեսից 2 մ, այնուհետև՝ 3, 6, 9 և այլ բարձրության վրա՝ կախված կառույցի բարձրությունից, անհրաժեշտության դեպքում, օգտագործելով բարձրացնող տեխնիկական կառուցվածքներ:

2.7. Կետերի ընտրությունը կատարում են պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության համապատասխան մասնագետները:

3. Չափումների կատարումը

3.1. Յուրաքանչյուր կետում չափումները կատարվում են հատակից (հենակետի մակերեսից) 0,5, 1,0, 1,7մ բարձրության վրա: Տվյալ կետում չափվում է ՌՀ ԷՄՃ ինտենսիվության առավելագույն մակարդակը:

3.2. Պտտովող կամ սկաներավորված դիագրամայով ալեհավաքների ՌՀ ԷՄՃ-ի ինտենսիվության չափումները պետք է կատարել ուղղվածության անշարժ դիագրամայի պայմաններում:

3.3. Տարբեր հիգիենիկ նորմատիվային հաճախականությունների տիրույթում աշխատող ՌՀ ԷՄՃ աղբյուրների միաժամանակյա աշխատանքի ժամանակ, չափումները պետք է կատարել առանձին՝ յուրաքանչյուր հաճախականության տիրույթում (հաճախականության յուրաքանչյուր տիրույթը առանձնացնող սարքի բացակայության դեպքում):

3.4. Չափումների կատարման ժամանակ չափող անձը և այլ անձինք չպետք է գտնվեն ճառագայթման աղբյուրի և ընդունող ալեհավաքի միջև:

3.5. ՌՀ ԷՄՃ ինտենսիվություն չափող սարքերը օգտագործվում են դրանց շահագործման հրահանգի համաձայն:

3.6. Չափումների արդյունքները ձևակերպվում են արձանագրությամբ: Արձանագրությունը պետք է ներառի ներքոհիշյալ տվյալները.

- արձանագրության ժամկետը (ամիս, ամսաթիվ, տարի) և համարը,
- օբյեկտի (կազմակերպության, արտադրության, տարածքի) անվանումը և հասցեն, ստորաբաժանման անվանումը (սենքը),
- ՌՀ ԷՄՃ - աղբյուրների հիմնական տեխնիկական բնութագրերը և անվանումները (հաճախականություն կամ հաճախականության տիրույթ, առավելագույն և օգտագործվող հզորություն, գործարանային համար, թողարկման տարի, գեներացիայի ռեժիմ, ճառագայթումով աշխատելու ժամանակահատվածը, և հաստատող փաստաթղթեր),
- ճառագայթող տարրերի նկարագրում,
- տեխնոլոգիական գործընթացի անվանումը և համառոտ նկարագիրը,
- չափման կետերի նկարագրումը՝ էսքիզով (անհրաժեշտության դեպքում),
- օգտագործվող պաշտպանական միջոցների նկարագրում,
- չափումների արդյունքներ,
- չափման միջոցների անվանումը և գործարանային համարը, ստուգման վկայականի գործունեության ժամկետը և համարը,
- կրճատ եզրակացություն (հետևություններ) ՌՀ ԷՄՃ աղբյուրի հետ աշխատելու պայմանների (ուսուցում, կենցաղ, հանգիստ)

սանիտարահիգիենիկ պահանջներին (նշելով նորմատիվ փաստաթուղթը) համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ.

- չափումներ կատարող անձի և պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության համապատասխան ստորաբաժանման ղեկավարի ստորագրությունները:

3.9. ՌՀ ԷՄՃ աղբյուրի անհայտ լինելու, աշխատանքային հաճախականության տիրույթների և աշխատանքի ռեժիմի վերաբերյալ տվյալների բացակայության դեպքում, ՌՀ ԷՄՃ ինտենսիվության չափումներ չեն կատարվում:

Տեսուչի ստորագրություն _____

Տնտեսավարողի ստորագրություն _____